ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
2021, № 2, 3-16 *Տնտեսագիտության տեսություն*
https://doi.org/10.46991/BYSU:G/2021.12.2.003

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԵՏԱՀԱՅԱՑՈՎ

ԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում մարդկային զարգացման գլխավոր մարտահրավերներից են կայունությունը և անհավասարության տարատեսակ դրսևորումները: Հոդվածում վերլուծության է ենթարկվել Հայաստանի մարդկային զարգացումը բնութագրող ցուցանիշների դինամիկան՝ միջազգային միտումների հետ համեմատելու, առկա բացերը գնահատելու և լուծումներ առաջարկելու նպատակով: Ուսումնասիրվել են 1990-2020 թթ. Հայաստանի և մի շարք երկրների ՄԶԻ-ները: Թեև մարդկային զարգացման զեկույցում Հայաստանի կրթության ցուցանիշները գերազանցում են աշխարհի միջինը, ոլորտում առկա խնդիրները երկրի աճը զսպող առանցքային սահմանափակումներից են:

Անցած 30 տարում կիրառվել են մարդկային զարգացումը բնութագրող տարբեր ցուցանիշներ՝ կանանց հնարավորությունների և իրավունքների ընդլայնման, անհավասարության, բազմաչափ աղքատության և այլն: Անտրոպոցենի դարաշրջանում կիրառվում է նոր մոտեցում՝ ՄԶԻ-ն ճշգրտվում է հաշվի առնելով մոլորակային ճնշումը:

Բանալի բառեր - *Մարդկային զարգացման տեսություն, մարդկային զարգացման ինդեքս, կենսամակարդակ, բազմաչափ աղքատություն, անտրոպոցեն, մոլորակային ճնշում*

Մարդկային զարգացման հայեցակարգում ուսումնասիրվում են տնտեսական (շնչային ՀԱԵ), սոցիալական (կրթական մակարդակ) և ժողովրդագրական (կյանքի տևողություն) առաջընթացի տարրերը: Ընդ որում, Մարդկային զարգացման ինդեքսի (ՄԶԻ) և դրա հիմնական ցուցանիշների աճը, անշուշտ, համարվում է որպես դրական տեղաշարժ և անցում մարդկային զարգացման նոր որակի: Հաշվի առնելով տարիների ընթացքում ի հայտ եկած խնդիրները, որոնց սրությունը դեռևս չի արտացոլվում ՄԶԻ-ում՝ ուշադրությունը կենտրոնացվում է մարդկային զարգացման նորանոր կողմերի վրա՝ անհավասարության, ժողովրդագրական միտումների, գենդերային զարգացման, գենդերային անհավասարության, բազմաչափ աղքատության և այլն: Վերջին տասնամյակում համաշխարհային հանրությունը բախվեց մեծաթիվ ճգնաժամերի՝ ֆինանսական, կլիմայական, անհավասարության, COVID-19 և այլն: Անտրոպոցենի դարաշրջանի աննախադեպ մարտահրավերները պահանջում են մարդկային զարգացման հայեցակարգային նոր մոտեցումներ և լուծումներ:

Մարդկային զարգացման տեսությունը գիտական շրջանառության մեջ է մտել 1990 թվականից: Դրա գլխավոր գաղափարախոսներն էին

Նոբելյան մրցանակակիր Ամարթյա Սենը և Մահբուբ Ուլ Հաքը: Մարդկային զարգացմանը վերաբերող գաղափարներ են շոշափվել բազմաթիվ մտածողների՝ Արիստոտելի, Ա.Սմիթի, Ջ.Ս.Մարշալի և այլոց աշխատություններում: Հայեցակարգի ձևավորման համար հիմք է ծառայել նաև մարդկային կապիտալի տեսությունը, որի հիմնադիրն է ամերիկացի տնտեսագետ Թ. Շուլցը: Վերջինս կարևորում էր մարդկային կապիտալում ներդրումները՝ դրանց հիմնական արդյունք համարելով մարդկանց աշխատանքային հմտությունների կուտակումը, հասարակության մեջ նրանց ստեղծարար գործունեությունը, առողջության պահպանումը և այլն[1]: Մարդկային կապիտալը դարձավ տնտեսական զարգացման վճռորոշ գործոն: Արթուր Լյուիսը որպես տնտեսական աճի նպատակ սահմանեց մարդկանց ընտրության ընդլայնումը[2]: Տնտեսական աճն ավանդաբար համարվել է հասարակության հիմնական տնտեսական նպատակներից մեկը, քանի որ գրեթե միշտ ակնկալվել է, որ ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների աճը կհանգեցնի մարդկանց եկամուտների ավելացմանը, կենսամակարդակի բարձրացմանը և աղքատության կրճատմանը: Այնինչ զարգացող երկրների փորձը վկայում է, որ տնտեսական աճի արագ տեմպերը հաճախ ուղեկցվում են եկամուտների սրվող անհավասարությամբ, գործազրկությամբ և աղքատությամբ: Մյուս կողմից, ավելի փոքր եկամուտներով երկրները հաջողությունների են հասնում բարեկեցության ապահովման և ռեսուրսների արդարացի բաշխման հարցում: Երբ 20-րդ դարի վերջերից մարդկային զարգացման հայեցակարգային գերակայություններ ընդունվեցին մարդկային ընտրության ընդլայնումը, անհատի համակողմանի զարգացման հնարավորությունների աճը և ազատությունների մեծացումը, քննարկումների առարկա դարձավ տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև գոյություն ունեցող կապը:

Մարդկային զարգացման հայեցակարգում տնտեսական աճը դիտվում է ոչ թե որպես մարդու զարգացման վերջնական նպատակ, այլ հիմնական նպատակներին հասնելու միջոց կամ գործոն: Բարեկեցությունը պետք է գնահատվի ոչ թե շնչային եկամտի մակարդակով, այլ մարդկանց հնարավորություններով՝ վարելու այնպիսի կյանք, որն իրենք արժանավայել են համարում: Եկամուտը չպետք է դիտվի որպես վերջնական նպատակ. այն միջոց է, որն ընդլայնում է մարդկանց ընտրությունը առողջապահության, կրթության, տնտեսական և հանրային ոլորտներում: Հիմնական գաղափարը, որի հեղինակը Ամարթյա Սենն էր, այն էր, որ հարկ է տնտեսագետների և քաղաքական գործիչների ուշադրությունը տնտեսական աճից տեղափոխել մարդկանց կյանքի ո-

[1] Տե՛ս **Theodore W. Shultz**, Investment in human capital, The American Economic Review, vol. 51, № 1, էջ 9:

[2] Տե՛ս **Mahbub Ul Haq**. Reflections on human development. Oxford University press. N-Y, Oxford, 1995, էջ 15

րակի փոփոխությանը վերաբերող ցուցանիշներին: Նրա կարծիքով՝ զարգացումը մարդկանց հնարավորությունների ընդլայնման գործընթաց է և ոչ թե նյութական կամ տնտեսական բարեկեցության աճ: Այսպիսով, նպատակադրելով զարգացումը՝ պետք է ոչ թե ավելացնել արտադրությունը, այլ մարդկանց հնարավորություն ընձեռել ընդլայնելու իրենց ընտրությունը, երկար և առողջ ապրելու, հասու լինելու մարդկության կուտակած գիտելիքներին և այլն[3]: Բացի այդ, հնարավորություններն ու ընտրությունը սերտորեն կապված են նաև ազատության հետ՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով: Ըստ Ամարթյա Սենի՝ զարգացումը վերջին հաշվով ազատության հարց է[4]:

Մարդկային զարգացման տեսության կայացման հարցում մեծ ավանդ ունեցան Ա. Սենը, Մ. Ուլ Հաքը, Փ. Սթրեթենը, Փ. Անանդը և այլ գիտնականներ:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել մարդկային զարգացման մարտահրավերները և ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև վերլուծել Հայաստանի ՄԶԻ-ները 1990-2020թթ.:

Մարդկային զարգացումը (այսուհետ՝ նաև ՄԶ) կարելի է բնութագրել բազում ցուցանիշների օգնությամբ, սակայն դրանց չափազանց մեծ թիվը կարող է շեղել քաղաքական գործիչների ուշադրությունը հիմնական միտումներից: Այդ պատճառով էլ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից առաջարկվել է որպես ՄԶ մակարդակի հիմնական բնութագրիչ կողմեր համարել բնակչության եկամուտը, մարդկանց կրթության մակարդակը և առողջական վիճակը: Սկզբնապես դրանց գնահատման ցուցանիշներ ընտրվել են.

- եկամտի գնահատման համար՝ երկրում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որն արտացոլում է մարդու՝ արժանավայել կենսամակարդակ ունենալու հնարավորությունը,
- կրթության գնահատման համար՝ չափահասների շրջանում գրագիտության մակարդակը և համապատասխան տարիքային խմբի բնակչությունից ուսումնական հաստատություններում ընդգրկվածների թիվը,
- առողջության գնահատման համար՝ կյանքի սպասվող միջին տևողությունը տարիներով:

Մարդկային զարգացման ամփոփ գնահատման նպատակով ընտրվել է մասնակի ցուցանիշների համատեղման եղանակը: Այդ ցուցանիշները համադրելի տեսքի և նույն չափողականության բերվում են հետևյալ բանաձևի միջոցով.

$$\text{Ցուցանիշի ինդեքս} = \frac{\text{Իրական արժեք} - \text{Դիտարկվող նվազագույն արժեք}}{\text{Դիտարկվող առավելագույն արժեք} - \text{Դիտարկվող նվազագույն արժեք}}$$

[3] Տե՛ս **Amartya Sen**, The concept of development. Handbook of Development Economics, ed. by H. Chenery and T.N. Srinivasan, vol. 1, էջ 19-21:

[4] Տե՛ս **Amartya Sen**, Development as freedom. New York: Oxford University press, 1999, էջ 17:

2010 թվականից սկսած՝ կրթությունը բնութագրող ցուցանիշներ են ընտրվել ուսման սպասվող տևողությունը և միջին տևողությունը: Ցուցանիշների սահմանված նվազագույն և առավելագույն արժեքների օգնությամբ (տե՛ս աղյուսակ 1) հաշվարկվում են առողջությունը, կրթությունը և կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների ինդեքսները, և այնուհետև՝ ՄԶԻ-ն:

ՄԶԻ-ն երեք բաղադրիչների ինդեքսների միջին երկրաչափականն է:

$$ՄԶԻ=(I_{Առողջություն} \cdot I_{Կրթություն} \cdot I_{Եկամուտ})^{1/3}$$

Եկամտի համաթվի հաշվարկման մեթոդը 1999 թ. վերանայվել է և առաջարկվել է ավելի կիրառական մոտեցում՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$I_{Եկամուտ} = \frac{\ln(y) - \ln(100)}{\ln(75000) - \ln(100)}$$

Աղյուսակ 1

Ցուցանիշների նվազագույն և առավելագույն արժեքները

Բաղադրիչ	Ցուցանիշ	Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք
Առողջություն	Կյանքի սպասվող տևողությունը (տարի)	20	85
Կրթություն	Ուսման սպասվող տևողությունը (տարի)	0	18
	Ուսման միջին տևողությունը (տարի)	0	15
Կենսամակարդակ	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ըստ գնողության համարժեքի, $)	100	75000

Աղբյուրը՝ http://hdr.undp.org/sites/default/files/hdr2020_technical_notes.pdf

ՄԶԻ փոփոխման միջակայքն է՝ 0≤ ՄԶԻ ≤1: Մինչև 2007/2008 թթ. զեկույցը եթե ՄԶԻ-ի միավորը 0.800 էր և ավելի բարձր, երկրները դասվում էին մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին, 0.500-0.799 միավորի դեպքում՝ միջին մակարդակ, իսկ 0.500-ից ցածր միավորների դեպքում՝ ցածր: 2009 թվականից մարդկային զարգացման զեկույցում ընդգրկված երկրները բաժանվում են չորս հիմնական խմբերի.

Աղյուսակ 2

Երկրների դասակարգումն ըստ մարդկային զարգացման ինդեքսի

	ՄԶԻ
Շատ բարձր մարդկային զարգացում	0.8 և բարձր
Բարձր մարդկային զարգացում	0.7-0.799
Միջին մարդկային զարգացում	0.55-0.699
Ցածր մարդկային զարգացում	0.55-ից ցածր

Աղբյուրը՝ http://hdr.undp.org/sites/default/files/hdr2020_technical_notes.pdf

Եթե համեմատենք Հայաստանի և հարևան երկրների ՄԶԻ-ները, 1990-2020 թթ., կարող ենք փաստել, որ 2001-2008 թթ. Հայաստանը տարածաշրջանի առաջատարն էր և միայն 2009 թ. զիջեց Թուրքիային: Այժմ Հայաստանը տարածաշրջանում չորրորդն է՝ Թուրքիայից, Վրաստանից և Իրանից հետո (տե՛ս աղյուսակ 3): 1990-ականներից մինչև 2010 թվականը միջազգային վարկանիշային աղյուսակում Հայաստանը միշտ գերազանցել Վրաստանին, սակայն 2010 թ.-ից դիրքերը զիջել է: Դիտարկվող ժամանակահատվածում Վրաստանի առաջխաղացումը հիմնականում կրթության ցուցանիշների բարելավման շնորհիվ է[5]: 2020 թ. զեկույցում Հայաստանը դասվել է բարձր մարդկային զարգացում ունեցող երկրների շարքին՝ 189 երկրների մեջ զբաղեցնելով 81-րդ հորիզոնականը (ցուցանիշը՝ 0.776)[6]: Նշենք, որ նախորդ տարվա համեմատությամբ Հայաստանի դիրքը վատթարացել է 9 հորիզոնականով:

2020 թ. զեկույցի արդյունքներով՝ առաջատար հինգ երկրներն են Նորվեգիան, Իռլանդիան, Գերմանիան, Հոնկոնգը և Իսլանդիան (տե՛ս աղյուսակ 3): Ուշագրավ է, որ Նորվեգիան վարկանիշային աղյուսակը գլխավորում է 2009 թվականից ի վեր, իսկ 30 տարում առաջին հորիզոնականը 7 անգամ զիջել է Կանադային, 3 անգամ՝ Ճապոնիային և 1-ական անգամ՝ Իսլանդիային և Շվեդիային[7]: Ինչ վերաբերում է Մեծ յոթնյակի երկրներին, Կանադան, 90-ականներց սկսած, միշտ առաջին տասնյակում է եղել, սակայն վերջին մի քանի տարում որոշակիորեն վատթարացրել է դիրքը և աժմ 16-րդ հորիզոնականում է: Դիտարկվող ժամանակահատվածում դիրքի վատթարացում է գրանցվել նաև Ճապոնիայում. այժմ 19-րդն է: Գերմանիան, ընդհակառակը, եթե 2000-ականների սկզբին զբաղեցնում էր 21-րդ և 22-րդ հորիզոնականները, ապա արդեն մեկ տասնամյակ է առաջին տասնյակում է և յոթնյակի առաջատարն է:

Տարիների ընթացքում ներկայացվել են մարդկային զարգացման նորանոր ցուցանիշներ (անհավասարության հաշվառմամբ ՄԶԻ, ժողովրդագրական միտումները բնութագրող ցուցանիշներ) և ինդեքսներ (գենդերային զարգացման, գենդերային անհավասարության, բազմաչափ աղքատության) և այլն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Մարդկային զարգացման ամենանշանակալի և դժվար հաղթահարելի արգելքներից է գենդերային անհավասարությունը: **Գենդերային զարգացման ինդեքսը (ԳԶԻ)** կանանց և տղամարդկանց ՄԶԻ-ի համադրությունն է և հաշվարկվում է չորս փուլով: Առաջին փուլում գնահատվում են կանանց և տղամարդկանց եկամուտները, երկրորդ փուլում՝ ՄԶՀ-ի հաշվարկման մեթոդաբանությանը համապատասխան հիմնա-

[5] Տե՛ս 1990-2020 թթ. Մարդկային զարգացման զեկույցներ:

[6] Տե՛ս Human development report 2020. The next frontier. Human development and the Anthropocene, UNDP, N-Y 2020, էջ 344:

[7] Տե՛ս 1990-2020թթ. Մարդկային զարգացման զեկույցներ:

կան ցուցանիշները և դրանց համաթվերը կանանց և տղամարդկանց համար առանձին-առանձին: Երրորդ փուլում հաշվարկվում են ՄԶԻ-ները կանանց և տղամարդկանց համար, իսկ չորրորդ փուլում՝ Գենդերային զարգացման ինդեքսը՝ ԳԶԻ=ՄԶԻկ/ՄԶԻտ: Երկրները, որոնց շեղումը գենդերային բացարձակ հավասարությունից պակաս է 2.5%-ից, մտնում են բարձր գենդերային հավասարություն ունեցող առաջին խմբի մեջ, 2.5-5% շեղման դեպքում՝ միջինից բարձր երկրորդ խմբում, 5-7.5%- ի դեպքում՝ միջին երրորդ խմբում, 7.5-10 %-ի դեպքում՝ միջինից ցածր չորրորդ խմբում և 10%-ից բարձր շեղման դեպքում՝ ցածր գենդերային հավասարություն ունեցող հինգերորդ խմբում:

Հատկանշական է այն, որ գենդերային խզումն առավել մեծ է ցածր մարդկային զարգացմամբ երկրներում: Շատ բարձր մարդկային զարգացում ունեցող երկրներում կանանց և տղամարդկանց ՄԶԻ-ների տարբերությունն ընդամենը 1.9% է, բարձր մարդկային զարգացում ունեցող երկրներում՝ 3.9%, իսկ միջին մարդկային զարգացում ունեցող երկրներում խզումն արդեն 16.5 % է: Նշված տարբերությունը Հայաստանում 1.8% է և գերազանցում է 5.7 % կազմող համաշխարհային միջինը: 2019 թ. Հայաստանը ԳԶԻ-ի 0.982 միավորով դասվել է բարձր գենդերային հավասարություն ունեցող առաջին խմբում[8]: Թեև այս ցուցանիշով Հայաստանը տարարածաշրջանի առաջատարն է, հարկ է ուշադրություն դարձնել Հայաստանում կանանց և տղամարդկանց շնչային ՀԱԵ-ների ակներև տարբերությանը: Այսպես, Հայաստանում կանանց շնչային ՀԱԵ-ն կազմել է 9.737 դոլար, այնինչ տղամարդկանց ՀԱԵ-ն 18.574 դոլար է: Համադրելով նշված ցուցանիշները համաշխարհային միջինների հետ՝ տեսնում ենք, որ եթե շատ բարձր մարդկային զարգացում ունեցող երկրներում կանանց ՀԱԵ-ն միջինը ցածր է 39.6%-ով, բարձր մարդկային զարգացում ունեցող երկրներում՝ 41.2%-ով, իսկ աշխարհում միջինը՝ 43.4 %-ով, ապա Հայաստանում այդ տարբերությունը 47.6% է: Անշուշտ նման տարբերությունն արտացոլվում է կանանց կենսամակարդակի, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Գենդերային անհավասարության ինդեքսն արտացոլում է կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման աստիճանը և հաշվարկվում է 5 ցուցանիշների հիման վրա՝ մայրական մահացության ցուցիչ, դեռահասների ծնելիության մակարդակ, առնվազն որոշակի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության մասնաբաժին և աշխատուժի մասնակցության մակարդակ: Թեև այս համաթվով Հայաստանը նույնպես առաջատար դիրք է զբաղեցնում տարածաշրջանում, մտահոգիչ են աշխատուժի մասնակցության ցուցանիշները: Այսպես, տղամարդկանց մասնակցությունը աշխատանքի շուկայում կազմել է

[8] Տե՛ս Human development report 2020. The next frontier . Human development and the Anthropocene, UNDP, N-Y 2020, էջ 357:

65.9%, այն դեպքում, երբ կանանց ցուցանիշը 47.1% է:

Ուշադրությունը կենտրոնացնելով աղքատության խնդիրների վրա՝ 2010 թվականին ներկայացվեց **բազմաչափ աղքատության ինդեքսը**: Բազմաչափ աղքատությունը բնութագրող զրկանքների ուսումնասիրությունը դրամային աղքատության վերլուծությունը լրացնում է ոչ դրամային տեսքով արտահայտված տեղեկատվությամբ: 2020 թ. իրականացված հետազոտության արդյունքներով՝ 107 զարգացող երկրների բնակչության 22 տոկոսը՝ մոտ 1.3 միլիարդ մարդ, 2018 թ. բազմաչափ աղքատության պայմաններում էր ապրում: Մոտ 690 միլիոն մարդ՝ աշխարհի բնակչության մոտավորապես 8.9 տոկոսը, տառապում էր սովից[9]:

Բազմաչափ աղքատության ազգային գնահատման համար հաշվի է առնվում տվյալ երկրի համատեքստը, և թեև այս մոտեցումը սահմանափակում է աղքատության գնահատականի միջազգային համադրելիությունը, սակայն այն հնարավորություն է տալիս տվյալ երկրի բնակիչների զրկանքների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու: Նշենք, որ Հայաստանում բազմաչափ աղքատության գնահատման համար դիտարկվում են հինգ չափումներ՝ հիմնական կարիքներ, բնակարանային պայմաններ, կրթություն, աշխատանք և առողջապահություն: 2018 թվականի համեմատությամբ 2019 թ. հիմնական կարիքների չափումով բոլոր ցուցանիշները բարելավվել են, սակայն շարունակում է բարձր մնալ արժանապատիվ կյանք ցուցանիշով զրկված բնակչության տեսակարար կշիռը (39.3%): Բնակարանային պայմանների չափումով ցուցանիշները ևս բարելավվել են՝ բացառությամբ գերբնակեցվածության (32.8%) և առողջ ջեռուցման (39.1%): Նվազել է երկարաժամկետ զբաղվածության, արժանավայել աշխատատեղերի (47.5%-ից 45.5%) և թերզբաղվածության մասով (40.9%-ից 36.6%) զրկված բնակչության տեսակարար կշիռը, իսկ աշխատաշուկային մասնակցության ցուցանիշով զրկված բնակչության տեսակարար կշիռը 21.6%-ից աճելով հասել է 25.3%-ի[10]:

Վերջին տարիներին էապես սրվել են **ժողովրդագրական** խնդիրները: Բարձր ՄԶԻ ունեցող երկրների մեծ մասում ծնելիության մակարդակը չի ապահովում սերունդների պարզ վերարտադրությունը, ուստի բնակչության աճը հիմնականում ապահովվում է միջազգային միգրացիայի հաշվին, ինչը կարող է սոցիալական լարվածության և կոնֆլիկտների աղբյուր դառնալ: Մարդկային զարգացման 2018 թ. զեկույցի տվյալներով՝ շատ բարձր ՄԶԻ ունեցող 50 երկրներից միայն 8-ում էր ծնելիության ընդհանուր գործակիցը ≥2, այն դեպքում, երբ

[9] Տե՛ս https://ophi.org.uk/multidimensional-poverty-index/gmpi-2020-faq/#What-are-the-data-sources

[10] Տե՛ս Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2020, էջ 51:

բնակչության պարզ վերարտադրության համար անհրաժեշտ է 2.150 միավոր: Նշենք, որ տվյալ ցուցանիշը մտահոգիչ է նաև Հայաստանում. 2019 թվականին այն կազմել է 1.599: Դեռևս 2009 թ. ՄԶ զեկույցում նկատելի էր ՀՀ-ում ծնելիության գործակցի անկումը, որը 1970-1975 թթ. գրանցված 3 միավորից 1990-1995 թթ. նվազել էր մինչև 2.4-ի, իսկ 2000-2005 թթ.՝ մինչև 1.7-ի[11]: ՄԶԻ-ի աճը կարող է ուղեկցվել ցածր ծնելիությամբ, ընտանիքի խորացող ճգնաժամով, զանգվածային միազավակության տարածումով և նույնիսկ անզավակությամբ (child free շարժում) և դեպոպուլյացիայով՝ բնակչության կայուն կրճատմամբ՝ ծնելիության նկատմամբ մահացության գերազանցելու հետևանքով (միջազգային միգրացիայի 0-ական կամ բացասական հաշվեկշռի դեպքում): Այստեղ հարկ է ավելացնել նաև այն խնդիրները, որոնք առաջ են գալիս բնակչության շարունակվող ծերացման հետևանքով, այն է՝ աշխատողների վրա խնամառուական բեռի աճը և ցածր ծնելիությամբ երկրների կախվածությունը արտաքին աշխատանքային ռեսուրսների հոսքից: Բնակչության վերարտադրության դերի թերագնահատումը կարող է հետագայում հանգեցնել այնպիսի գործոնների կուտակման, որոնք կհակազդեն ՄԶԻ-ի աճին[12]: Մյուս կողմից էլ անհանգստացնող են զարգացող երկրներում բնակչության աճի տեմպերը, որոնք խնդիրներ են առաջացնում բազմաթիվ ոլորտներում:

Հայաստանի տնտեսական զարգացման օրակարգը անշուշտ պետք է հաշվի առնի **ժողովրդագրական** խնդիրները, որոնք անհանգստացնող են հիմնականում երեք առումով՝ ցածր ծնելիություն, ծերացում և միգրացիա: Ըստ ՄԱԿ-ի սահմանած ժողովրդագրական ծերացման սանդղակի, եթե երկրի բնակչության կառուցվածքում 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը 7%-ից ավելի է, ապա տվյալ բնակչությունը համարվում է ծերացող: Այդ ցուցանիշը 2020 թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ-ում կազմել է 12.3 %, 2019 թ. տարեսկզբի դրությամբ ՝ 11.9%, իսկ 2018թ.՝ 11.6%[13]: Ակնառու են նաև Հայաստանում բնական հավելաճի ցուցանիշները. եթե 1986 թ. երկրի բնական հավելաճը կազմում էր 61782 մարդ, ապա 2019 թ. այդ ցուցանիշը 9855 մարդ էր:

Մարդկային զարգացումը չի կարող լիարժեք համարվել առանց մարդկային ազատության, սակայն փորձագետները շեշտում են, որ **ժողովրդավարությունը** բախվում է լրջագույն խոչընդոտների ամբողջ աշխարհում: Պատմության ընթացքում միլիոնավոր մարդիկ պատ-

---

[11] Տե՛ս Human Development Report 2009. Overcoming barriers:Human mobility and development. UNDP, Geneva, էջ 192:

[12] Человеческое развитие: новое измерение социально-экономического прогресса. М. Права человека, 2008, էջ 250.

[13] Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2020, ՀՀ վիճակագրական կոմիտե, Եր., 2020, էջ 16:

բաստ են եղել զոհաբերելու իրենց կյանքը հանուն ազգային և սեփական ազատության։ Մարդկային զարգացման նվաճումները էապես տարբերվում են՝ կախված նրանից՝ երկիրը ժողովրդավարական է, թե ավտորիտար։ Բրիտանական «The Economist Intelligence Unit» հետազոտական, խորհրդատվական հեղինակավոր ընկերությունը գնահատում է ժողովրդավարության մակարդակը։ Այն իր «Ժողովրդավարության համաթիվ 2020» զեկույցում գնահատել է 167 երկրների ժողովրդավարության մակարդակը։ Ժողովրդավարության ինդեքսը հաշվարկելիս հիմք են ընդունել հետևյալ 5 չափանիշները՝ ընտրական գործընթաց և պլյուրալիզմ, քաղաքացիական ազատություններ, կառավարության աշխատանք, քաղաքական կյանքին մասնակցություն և քաղաքական մշակույթ։ Գնահատվում է 0-10 միավորի միջակայքում։ Առանձնացվում են չորս ռեժիմներ՝ 1.«լիարժեք ժողովրդավարություն»՝ 8-10 միավորի դեպքում, 2.«թերի ժողովրդավարություն»՝ 6-7.99 միավոր, 3.«հիբրիդային ռեժիմ»՝ 4-5.99 միավոր և 4.«ավտորիտար ռեժիմ»՝ 0-3.99 միավոր։

2020 թ. աշխարհի բնակչության ընդամենը 8.4%-ն էր ապրում «լիարժեք ժողովրդավարության» պայմաններում (23 երկիր), իսկ մեկ երրորդից ավելին գտնվում էր «ավտորիտար ռեժիմում»։ Ժողովրդավարության միջին համաթիվը 2019-ի 5.44 միավորից իջել է՝ հասնելով 5.37-ի։ Սա համաշխարհային վատագույն միջին ցուցանիշն է 2006-ից ի վեր, երբ առաջին անգամ հրապարակվեց համաթիվը։ 2020-ի արդյունքը նույնիսկ ավելի վատն է, քան 2010-ինը, երբ աշխարհում մոլեգնում էր տնտեսական և ֆինանսական ճգնաժամը և ընդհանուր միավորը 5.46 էր։ Ինչպես և նախորդ տարի՝ 2020 թ. առաջին եռյակում են համապատասխանաբար Նորվեգիան (9.81), Իսլանդիան (9.37) և Շվեդիան (9.26)։ Համաթիվը եզրափակում է Հյուսիսային Կորեան՝ 167-րդ տեղում՝ 1.08 միավորով։

Հայաստանը կրկին դասվել է «հիբրիդային ռեժիմ»-ների շարքին, սակայն նախորդ տարվա համեմատ անկում է գրանցել։ Եթե 2019 թ. Հայատանը 89-րդն էր՝ 5.54 միավորով, ապա 2020 թվին 86-րդն է (5.35 միավոր)։ Անկումը պայմանավորված է քաղաքացիական ազատություններ (5.59-ից 5) և կառավարության աշխատանք (5.36-ից 5) կատեգորիաներում միավորների կրճատմամբ։ Վատագույն արդյունք է գրանցվել քաղաքական մշակույթ կատեգորիայում (3.13)։ «Ժողովրդավարության համաթիվ 2019»-ում Վրաստանը 5.31 միավորով հայտնվել է 91-րդ հորիզոնականում, Ադրբեջանը 2.68 միավորով 146-րդ տեղում է, Թուրքիան 4.48 միավորով՝ 104-րդ տեղում, Իրանը 2.20՝ 152-րդ հորիզոնականում[14]։

[14] Տե՛ս Democracy Index 2020.In sickness and in health?, The Economist Intelligence Unit 2021, էջ 8-12։

Մարդկային զարգացումը և անտրոպոցենի դարաշրջանը

Մարդկային զարգացման տեսությունը, ներառելով գործունեության տարբեր ոլորտներ, Մարդկային զարգացման իր զեկույցներում առանձնահատուկ ուշադրություն է դարձրել տնտեսական և սոցիալական զարգացման տարրերին, քաղաքական, հանրային մասնակցության, ժողովրդավարության, մշակութային, մարդու իրավունքներին առնչվող և այլ խնդիրների. օրինակ՝ 2000 թ. Մարդկային զարգացման զեկույցը լույս է տեսել «մարդու իրավունքներ և մարդկային զարգացում» խորագրով, 2002 թ.՝ ժողովրդավարություն և ՄԶ, 2004 թ.՝ մշակութային ազատություն, 2007-2008 թ.՝ պայքար կլիմայի փոփոխության դեմ, 2015 թ.՝ աշխատանք ու ՄԶ և այլն: Մարդկային զարգացման զեկույցի 30-րդ հոբելյանական թողարկումը լույս է տեսել «Հաջորդ սահմանը. մարդկային զարգացումը և անտրոպոցենը» խորագրով:

Գիտնականների կարծիքով՝ այժմ գտնվում ենք Հոլոցենի ավարտական փուլում, որը տևում է ավելի քան 12.000 տարի: Ըստ վարկածի՝ մարդկությունը մուտք է գործում երկրաբանական նոր դարաշրջան՝ անտրոպոցեն, որտեղ մարդիկ մոլորակի ապագան ձևավորող գերիշխող ուժն են[15]: Անտրոպոցեն տերմինն առաջարկել են Յուջին Սթրոմերն ու Նոբելյան մրցանակի դափնեկիր Փոլ Կրուտցենը և օգտագործվել է նկարագրելու այն ժամանակահատվածը, որի ընթացքում մարդու գործողությունները կտրուկ ազդեցություն են ունենում Երկրի և նրա էկոհամակարգերի վրա, ներառյալ մարդածին կլիմայի փոփոխությունը[16]:

Խնդիրն այն է, թե արդյոք համաշխարհային հանրությունը գիտակցելով սպառնալիքները, կընտրի զարգացման նոր ուղիներ: Կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող բնական աղետները կրճատում են շնչային ՀՆԱ-ն միջինը 1.2 տոկոսային կետով՝ բնականաբար առավել բացասաբար ազդելով ցածր եկամուտներով երկրների վրա: Մոլորակի ջերմաստիճանի աճը, առանց մեղմող արդյունավետ քաղաքականությունների, կհանգեցնի գլոբալ կենսամակարդակի անկման 5-10%-ով[17]:

---

[15] Տե՛ս http://quaternary.stratigraphy.org/working-groups/anthropocene/

[16] Տե՛ս http://www.igbp.net/download/18.316f18321323470177580001401/1376383088452/NL41.pdf

[17] World economic outlook. Managing Divergent Recoveries. International Monetary Fund.April 2021. Washington, էջ 27:

Աղյուսակ 3

Մարդկային զարգացման ինդեքսը և մոլորակային ճնշման հաշվառմամբ Մարդկային զարգացման ինդեքսը որոշ երկրներում

ՄԶԻ հորիզոնական	ՄԶԻ	Կյանքի սպասվող տևողություն (տարի)	Ուսման սպաս. տևողություն (տարի)	Ուսման միջին տևողություն (տարի)	Մեկ շնչի հաշվով ՀԱԵ (2017 PPP $)	Շնչային ՀԱԵ - ՄԶԻ	ՄՄԶԻ	Կորուստ (%)	Ածխածնային արտանետումներ շնչային (տոննա)	Ռեսուրսների սպառում շնչային (տոննա)
1.Նորվեգիա	0.957	82.4	18.1	12.9	66.494	7	0.781	18.4	8.3	37.9
2.Իռլանդիա	0.955	82.3	18.7	12.7	68.371	4	0.833	12.8	8.1	21.5
3.Շվեյցարիա	0.955	83.8	16.3	13.4	69.394	3	0.825	13.6	4.3	32.1
4.Հոնկոնգ	0.949	84.9	16.9	12.3	62.985	7	-	-	5.9	-
5.Իսլանդիա	0.949	83.0	19.1	12.8	54.682	14	0.768	19.1	10.8	34.8
6.Գերմանիա	0.947	81.3	17.0	14.2	55.314	11	0.814	14	9.1	23.0
7.Շվեդիա	0.945	82.8	19.5	12.5	54.508	12	0.817	13.5	4.1	32.2
8.Ավստրալիա	0.944	83.4	22.0	12.7	48.085	15	0.696	26.3	16.9	43.4
9.Նիդերլանդներ	0.944	82.3	18.5	12.4	57.707	6	0.794	15.9	9.5	27.7
10.Դանիա	0.940	80.9	18.9	12.6	58.662	2	0.824	12.3	6.1	24.6
13.Մեծ Բրիտան.	0.932	81.3	17.5	13.2	46.071	13	0.825	11.5	5.6	22.7
16.Կանադա	0.929	82.4	16.2	13.4	48.527	5	0.721	22.4	15.3	34.9
17.ԱՄՆ	0.926	78.9	16.3	13.4	63.826	-7	0.718	22.5	16.6	32.5
19. Ճապոնիա	0.919	84.6	15.2	12.9	42.932	9	0.781	15.0	9.1	25.9
19.Լիխտենշտեյն	0.919	80.7	14.9	12.5	131.032	-18	-	-	4.0	-
26.Ֆրանսիա	0.901	82.7	15.6	11.5	47.173	-1	0.801	11.1	5.2	22.5
29.Իտալիա	0.892	83.5	16.1	10.4	42.776	0	0.792	11.2	5.6	21.9
51.Ղազախստան	0.825	73.6	15.6	11.9	22.857	9	0.672	18.5	17.6	18.1
52.Ռուսաստան	0.824	72.6	15.0	12.2	26.157	2	0.728	11.7	11.7	9.9
54.Թուրքիա	0.820	77.7	16.6	8.1	27.701	-4	0.746	9.0	5.2	16.2
61.Վրաստան	0.812	73.8	15.3	13.1	14.429	22	0.772	4.9	2.6	9.1
70.Իրան	0.783	76.7	14.8	10.3	12.447	26	0.698	10.9	8.8	14.1
81.Հայաստան	0.776	75.1	13.1	11.3	13.894	9	0.745	4.0	1.9	8.2
85.Չինաստան	0.761	76.9	14.0	8.1	16.057	-11	0.671	11.8	7.0	20.9
88.Ադրբեջան	0.756	73.0	12.9	10.6	13.784	3	0.720	4.8	3.7	6.3

Յոթնյակի երկրներ

Աղբյուրը՝ Human development report 2020. Human development and the Anthropocene, UNDP, N-Y 2020, էջ 241-242

Առաջարկվում է կատարել մարդկային զարգացման ինդեքսի ճշգրտումներ և դրանք օգտագործել նոր երկրաբանական դարաշրջանում՝ հաշվի առնելով **մոլորակային ճնշումը**։ Ինչքան ավելի մեծ է էկոհամակարգերի վրա մարդկանց բացասական ազդեցությունը, այնքան մոլորակային ճնշման հաշվառմամբ մարդկային զարգացման ինդեքսը ավելի փոքր կլինի ավանդական եղանակով հաշվարկվող մարդկային զարգացման ինդեքսից։ Հայաստանում այդ բացասական ազդեցությունը գնահատվել է 4%, և այս ցուցանիշը ամենափոքրն է տարածաշրջանում (Ադրբեջան՝ 4.8%, Վրաստան՝ 4.9%, Թուրքիա՝ 9% և Իրան 10.9%)։ Հատկանշական է, որ մոլորակի էկոհամակարգերի վրա առավել մեծ ճնշում են գործադրում մարդկային ավելի բարձր զարգացում ունեցող երկրները։ Մեծ յոթնյակի երկրները, որոնց բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 31.2%-ը, իսկ ապրանքների ու ծառայությունների արտահանման 32.2%-ը, մոլորակային ճնշումը բնութագրող բոլոր ցուցանիշներով գերազանցում են աշխարհի միջիններին։ Մասնավորաբար, եթե բնակչության մեկ շնչի հաշվով ածխածնային արտանետումները միջինը կազմում են 4.6 տոննա, ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 16.6 տոննա է, Կանադայում՝ 15.3 տոննա, իսկ Գերմանիայում՝ 9.1 տոննա։ Նմանապես, եթե բակչության մեկ շնչի հաշվով ռեսուրսների սպառման ծավալները միջինը կազմում են 12.3 տոննա, Կանադայում այդ ցուցանիշը 34.9 տոննա է, ԱՄՆ-ում՝ 32.5 տոննա, Ճապոնիայում՝ 25.9 տոննա, իսկ Գերմանիայում՝ 23 տոննա (տե՛ս աղյուսակ 3)։ Երկարաժամկետ հեռանկարում կայուն և ներառական տնտեսությունում չեն կարող անտեսվել մոլորակի էկոհամակարգերին հասցվող բացասական վնասները, կլիմայի փոփոխության խնդիրները և այլն։

Այսպիսով, 1990-2019 թթ. մարդկային զարգացման ասպարեզում Հայաստանի միջին տարեկան աճը կազմել է 0.59%, այն դեպքում, երբ աշխարհի միջինը 0.71% է, իսկ բարձր մարդկային զարգացմամբ երկրների միջինը՝ 0.98 %։ Թեև այժմ Հայաստանը բարձր մարդկային զարգացում ունեցող երկրների շարքում է, կենսամակարդակի ցուցանիշով չի հասնում ո՛չ այդ խմբի, ո՛չ էլ աշխարհի միջինին։ Կրթության և առողջապահության ոլորտներում առկա խնդիրները փոխազդելով կրճատում են երկրի արտադրողականության և աճի հեռանկարները։ Վերոնշյալ ոլորտներում անբավարար ծախսերը խոչընդոտում են երկրում ներառականությունն ապահովելու, աղքատությունը կրճատելու, կրթության որակը բարձրացնելու և լիարժեք կյանքով ապրելու նպատակները։ 2020 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերն առողջապահության ոլորտում կազմել են 2.4%, իսկ կրթության ոլորտում՝ 2.3 %, համեմատ նախորդ տարվա համապատասխանաբար 1.5 %-ի և 2 %-ի[18]։

[18] Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_03_21a_112.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_20a_211.pdf

Համաշխարհային տնտեսական ֆորումի գնահատականներով՝ Հայաստանի ուշագրավ մրցակցային թերությունները պայմանավորված են աշխատուժի հմտություններով: Այսպես, 141 երկրների շարքում Հայաստանը անձնակազմի վերապատրաստման մակարդակով 97-րդն է, մասնագիտական ուսուցման որակով՝ 86-րդը, հմուտ աշխատողներ գտնելու դյուրինությամբ՝ 85-րդը, իսկ շրջանավարտների հմտություններով՝ 100-րդը[19]: Համաշխարհային տնտեսության ներկայիս զարգացումներով պայմանավորված՝ մտահոգիչ է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի (ԳՏՃՄ, STEM) ուղղություններով ուսանողների ընդգրկվածության մակարդակը: Այս համատեքստում առանցքային կարևորություն է ստանում հետևողական քաղաքականությունը՝ ուղղված կրթական համակարգը աշխատաշուկայում պահանջվող հմտություններին համապատասխանեցնելուն:

Ինչպես արդեն նշել ենք, մարդկային զարգացման նպատակն ընտրությունների և հնարավորությունների ընդլայնումն է, այդուհանդերձ դա չի ենթադրում մոլորակային ճնշման կրճատում: Մոլորակի վրա առավելապես ճնշում են ավելի բարձր մարդկային զարգացում ունեցող երկրները: Տարբեր է երկրների ավանդը գլոբալ խնդիրների առաջացման և շրջակա միջավայրի վրա ազդեցության հարցում: Անհավասարության դրսևորումները զգալի են նաև բնապահպանական վնասի բաշխման ժամանակ. վնասի մեծ մասը զարգացած երկրների գործունեության արդյունք է, մինչդեռ աղքատ երկրները դառնում են բնապահպանական վնաս կրողներ:

Ներկայումս մոլորակային և սոցիալ-տնտեսական մարտահրավերները զուգահեռ են ընթանում և միայն ուժգնացնում են միմյանց: Ստեղծված իրավիճակը շտկելու համար անհրաժեշտ է վերափոխել սոցիալական նորմերը, խթանել նորարարությունները, զարգացնել բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման մշակույթը և այլն:

АНИ ГАЛСТЯН – ***Концепция человеческого развития в ретроспективе.*** – Наиболее важными вызовами человеческого развития в современном мире являются стабильность и различные проявления неравенства.

В статье анализируется динамика показателей, характеризующих человеческое развитие в Армении, с целью сопоставления с международными тенденциями, оценки существующих недостатков и предложения решений. Были изучены ИЧР Армении и ряда стран в период 1990-2020 гг. Несмотря на то, что показатели образования в Армении, представленные в Докладе о человеческом развитии, превышают среднемировые, существующие проблемы в этой области являются основными препятствиями, сдерживающими экономический рост страны. За последние 30 лет использовались различные показатели, характеризующие человеческое развитие: расширение прав и возможностей женщин,

[19] Տե՛ս The Global Competitiveness Report 2019.World Economic Forum, Geneva, 2019, էջ 64:

равенство, многомерная бедность и т. д. В эпоху антропоцена применяется новый подход измерения, который основан на корректировке ИЧР с учетом планетарной нагрузки.

Ключевые слова: *концепция человеческого развития, индекс человеческого развития, уровень жизни, многомерная бедность, антропоцен, планетарная нагрузка*

ANI GALSTYAN – *The Concept of Human Development in Retrospect.* – Nowadays, instability and various manifestations of inequality pose challenges to human development. The article analyzes the dynamics of indicators characterizing the human development of Armenia, aiming at comparing the results of the analysis with international trends, assessing the existing gaps, and proposing solutions. The study of the HDI's of Armenia, as well as those of several other countries, covers the period of 1990-2020. As stated in the Human Development Report, irrespective of the fact that the indicators of Armenia's Education exceeded the world average, the existing problems in the field are one of the key constraints restraining the country's growth.

Over the past 30 years, various indicators characterizing human development have been used: women's rights and opportunities extension, equality, multidimensional poverty, etc. A new approach is being implemented in the era of Anthropocene, i.e. HDI is adjusted in accordance with the planetary pressures.

Key words: *human development concept, Human Development Index, standard of living, multidimensional poverty, Anthropocene, planetary pressure*